ԿԱՐԾԻՔ

Նաիրա Արարատի Թոռունյանի՝ «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման չափազանց արդիական է՝ պայմանավորված ոչ միայն հայոց լեզվի ուսուցման ռազմավարական նշանակությամբ, այլև ժամանակակից գիտական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ոլորտներում անհատի մայրենիի խորքային իմացության, խոսք կառուցելու, գրագետ, ազատ և անկաշկանդ հաղորդակցվելու պահանջով: Խոսքն իբրև մշակութային արժեք ձևավորելը նպատակաուղղված է նաև ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, հասարակության, երկրի և աշխարհի զարգացման մեջ ներդնում անելու ունակ անհատի ինքնաիրացմանը, նրա արժեհամակարգի ձևավորմանը: Իսկ բանավոր և գրավոր խոսքին տիրապետելու կարողություններ և հմտություններ մշակելու, խոսքի մշակույթ ձևավորելու համար անհրաժեշտ է ունենալ հարուստ բառապաշար, որը խոսքի շինանյութն է: Վերը նշված խնդիրների լուծմանն է միտված Նաիրա Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով ատենախոսությունը: Այն բաղկացած է 3 գլուխներից:

Առաջին գլխում ատենախոսը վերլուծել է հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի զարգացման նախադրյալները, անդրադարձել է 5-18-րդ դարերում, ապա նաև 19-րդ դարից մինչև մեր օրերը հայերենի ուսուցման, մասնավորապես սովորողների բառապաշարի հարստացման մեթոդիկայի պատմատեսական զարգացմանը, ինչպես նաև ռուս և օտարերկրացի մեթոդիստ-մանկավարժների՝ սովորողների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման ուղղությամբ առաջարկած մեթոդներին և ուղիներին: Այս գլխում Ն. Թոռունյանը դիտարկել է նաև կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործընթացը ժամանակակից դպրոցում: Ուշագրավ է այն, որ ատենախոսը, անհրաժեշտ համարելով վերանայել

կրտսեր դպրոցականի բառապաշարը տարաբնույթ աշխատանքներով հարստացնելու ուղիները, լրամշակել է մայրենիի դասերի ժամանակ իրականացվող բառային աշխատանքի քայլաշարի մոդելը՝ հատկապես կարևորելով նորածանոթ բառերի գործածումը կապակցված խոսքում: Այս առումով ուսումնասիրության արժանիքներից մեկն այն է, որ ատենախոսը սովորողների բառապաշարի հարստացման գործընթացում կարևորում է բառիմաստների յուրացումը և դրանց՝ խոսքային տարբեր միավորներում միաժամանա՛կ գործածումը: Ատենախոսը բարեխղճորեն ուսումնասիրել և բացահայտել է սովորողների սահմանափակ բառապաշար ունենալու պատճառները, եզրակացրել է, որ նրանց բառապաշարում հատկապես պասիվ են այն բառերը, որոնք առօրյայում քիչ են գործածվում կամ չեն գործածվում, և առաջարկել ներառել բնագրին համապատասխան օժանդակ բառերի թեմատիկ շարքեր՝ այդ համատեքստում մշակելով սովորողների բառապաշարի հարստացմանը միտված գործնական վարժությունների համակարգ:

Երկրորդ գլխում ատենախոսը հիմնավորել է մայրենիի դասագրքերի բնագրերի վերնագրերից հետո «Հենակետային բառեր» ենթամիավորը զետեղելու անհրաժեշտությունը, որում ներառված կլինեն բնագրի նորածանոթ բառերը կամ համապատասխան թեմատիկ բառաշարք, իսկ բնագրի օժանդակ կառույցում վարժություններն ու առաջադրանքները կազմված լինեն նաև «հենակետային բառերի» շուրջ: Կարծում ենք, որ այս առումով ատենախոսը կարևոր ընդհանրացում է կատարել՝ առաջարկված ուղիով սովորողների ուշադրությունը բնագրի բառամթերքին կենտրոնացնելու և բառային աշխատանք կազմակերպելու առումով:

Այս գլխում Նաիրա Թոռունյանը որպես սովորողի բառապաշարի հարստացման միջոց դիտարկել է նաև բառակազմական կաղապարներով վերլուծության կարողության ձևավորման ճանապարհով սովորողների՝ բառիմաստի գիտակցմանը, ըմբռնմանը և յուրացմանը հասնելու ուղիները: Այս առումով ատենախոսը կազմել է մայրենիի դասագրքերի բնագրերում գործածված ածանցավոր և բարդ բառերի ցանկեր՝ ածանցները դասակարգելով՝ ըստ նախածանցների և վերջածանցների, ըստ հոմանիշ, հականիշ ածանցների, բարդ բառերը՝ ըստ հոդակապով և անհոդակապ կազմությունների, և դրանք ներկայացրել «Հավելված» բաժնում: Այս ուղղությամբ ատենախոսը հսկայական և կարևոր աշխատանք է կատարել: Ուշագրավ է նաև

բառակազմական աշխատանքի մեթոդական քայլաշարը, որում ատենախոսը կարևորում է միմյանց վերալրացնող քայլերի միջոցով սովորողների բառակազմական կարողությունները զարգացնելու անհրաժեշտ և բավարար հիմքի ստեղծումը՝ ապահովելով սովորողի բառապաշարի խոսքակազմական քանակը, ոչ թե բառապաշարում բառերի սոսկ քանակն առհասարակ: Սա ևս ատենախոսության արժանիքներից է:

Երրորդ գլխում ատենախոսը դիտարկել է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման առնչությունները, շեշտադրել սովորողի՝ քերականական հարց առաջադրելու կարողության, մասնավորապես բայերից խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորման անհրաժեշտությունը: Այս շեշտադրումը արդիական է և կարևոր ինչպես սովորողի խոսքի զարգացման, այնպես էլ վերացական ու տրամաբանական լեզվամտածողության ձևավորման առումով: Համամիտ ենք ատենախոսի այն տեսակետին, որ սովորողների խոսքակազմական թերություններից մեկն էլ նախադասության անդամների միջև քերականական հարցերի միջոցով կապեր ստեղծելու անկարողությունն է: Ուշագրավ է ատենախոսի այն դիտարկումը, որ անհրաժեշտ է բնագրի օժանդակ կառույցում և դասագրքերի բառարաններում զետեղված բայերի կողքին փակագծերում խնդրառական հարցեր գրելը, որի անհրաժեշտությունը հիմնավորել է հետազոտական-փորձարարական ուսումնասիրության արդյունքների վերլուծությամբ:

Հավելենք նաև այն, որ ատենախոսը կատարել է մեթոդական արժեքավոր աշխատանք՝ մշակելով, փորձարկելով և ներդնելով տարաբնույթ լեզվական և գործնական վարժությունների համակարգ՝ ներառելով նաև ձևաբանական, բառակազմական կաղապարներով վերլուծական-համադրական աշխատանքը:

Այս գլխում ատենախոսն անդրադառնում է նաև տարրական դասարաններում դասավանդվող առարկաների և մայրենիի զուգորդումների միջոցով սովորողների բառապաշարի հարստացման հնարավորություններին:

Երրորդ գլուխն ավարտվում է հիմնախնդրի ուղղությամբ ատենախոսի իրականացրած փորձարարության արդյունքների վերլուծությամբ: Ն. Թոռունյանը ներկայացրել է իր թեմայի հիմնախնդրի ուղղությամբ կատարած փորձարարության

ընթացքը, վերլուծել և ամփոփել է արդյունքները, որոնց հիման վրա մշակել է մեթոդական երաշխավորությունները:

Նաիրա Թոռունյանն ուսումնասիրել է ատենախոսության հիմնախնդիրներին առնչվող լեզվաբանական և մանկավարժահոգեբանական ստվարածավալ գրականություն, ծանոթ է հրապարակում եղած թե՛ հայրենական և թե՛ օտար բազմաթիվ հեղինակների աշխատություններին, գիտնականի բարեխղճությամբ քննել է նրանցում ներկայացված տարբեր սկզբունքներ ու դասակարգումներ՝ դիպուկ վերլուծություններ կատարելով, շատ հաճախ արտահայտելով նաև իր վերաբերմունքն այս կամ այն խնդրի մասին: Տեսական գրականությունից մեջբերումները չափավոր են և տեղին, տրամաբանորեն շաղկապվում են շարադրանքին: Եզրակացությունները բխում են ուսումնասիրության արդյունքներից և արտահայտում են հետազոտության խնդիրները: Ատենախոսն ընդունված կարգով և գիտական չափանիշներին համապատասխան ներկայացրել է ուսումնասիրության նպատակը, խնդիրները, նորույթը, օբյեկտն ու առարկան:

Ն. Թոռունյանն իր ուսումնասիրությունն իրականացրել է նախատեսված խնդիրների շրջանակում, բացահայտել, դասակարգել և վերլուծել է կրտսեր դպրոցականի բառապաշարի զարգացման մեթոդիկայի տեսական ու գործնական հիմքերը, բացահայտել է կրտսեր դպրոցականների խոսքի թերությունները, դրանց առաջացման պատճառները: Ատենախոսը դրսևորել է գիտական աշխատանքներ կատարելու հմտություններ,նրա ներկայացրած առաջարկությունների մեծ մասը կարող են օգտակար լինել տարրական դպրոցի ուսուցիչների համար:

Գնահատելով Նաիրա Թոռունյանի իրականացրած ուսումնասիրության ընթացքն ու արդյունքները՝այնուամենայնիվ, ցանկանում ենք կատարել որոշ դիտողություններ.

1. Հայցորդը փորձարարական աշխատանք է իրականացրել ԵՊԲՀ 1-ին կուրսի ուսանողների շրջանում: Մեր կարծիքով, ճիշտ կլիներ հարցումը կատարել այլ շրջանակներում, որտեղ ավելի շատ էին առնչվում տարրական դասարանների աշակերտների բառապաշարի հարստացման խնդիրներին (էջ 51):

2. Ատենախոսության 2-րդ գլխում Ն. Թոռունյանն ամենայն մանրամասնությամբ դիտարկել է ածանցի և արմատի ճանաչման շնորհիվ սովորողների բառապաշարի

հարստացման հնարավոր ուղիները, ինչպես նաև բառակազմական կաղապարների վերլուծության ճանապարհով բառիմաստի յուրացման հնարը: Այդ համատեքստում նա մշակել և փորձարկել է ածանցավոր և բարդ բառերի իմաստների յուրացման մեթոդական քայլաշարեր:

Կարծում ենք, որ ուսումնասիրությունն առավել ամբողջական կլիներ, եթե ատենախոսը նույն մանրամասնությամբ ներկայացներ նաև բարդածանցավոր բառերի և նրանց իմաստների յուրացման մեթոդական քայլաշարը: Մինչդեռ ատենախոսը բավարարվել է՝ բարդածանցավոր բառերին միայն մեկ նախադասությամբ անդրադառնալով (էջ 84):

3. Աշխատանքը հիմնականում գրված է գիտական ոճի պահանջներին համապատասխան, բայց շարադրանքում հանդիպում են ոճական անհարթություններ, խրթին ձևակերպումներ:

Այնուամենայնիվ, Նաիրա Թոռունյանի՝ «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով ատենախոսության վերաբերյալ մեր ներկայացրած դիտողությունները բնավ չեն ստվերում կատարված աշխատանքի արժանիքները: Ատենախոսն իր հիմնախնդրի շուրջ ուսումնասիրության ընթացքում դրսևորել է ինքնուրույնություն, տիրապետում է քննարկվող ոլորտի խնդիրներին, վերլուծել է ուսումնասիրության արդյունքները՝ կատարելով եզրակացություններ և առաջարկություններ: Մշակած մեթոդական ցուցումներն ու երաշխավորությունները կարող են կիրառվել տարրական դասարաններում՝ կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում, դասագրքաստեղծ մասնագիտական խմբերի և մեթոդիստների կողմից ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև տարաբնույթ գիտական ուսումնասիրությունների ընթացքում:

Ատենախոսի հրապարակած 9 հոդվածները արտացոլում են են ատենախոսության խնդիրները և ունեն գիտական արժեք:

Եզրակացություն

Նաիրա Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն թեման արդիական է,աշխատանքն ունի տեսական և գործնական

նշանակություն: Փորձարարության արդյունքները հավաստի են և օգտակար: Ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ / / Անահիտա Մովսիսյան

Ա. Մովսիսյանի ստորագրությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտքարտուղար / / Լևոն Հովսեփյան